

ՂԱՐԱՐԱՂԻ ՀԱՐՑԸ ԱՆՀԱԿԱԿՇՈՒՆԻ ԴԱՐՁԱԾ

ԿԸ ԳՐԷ «ՓՐԱԽՏԱ»

Խորհրդային Միութեան պաշտօնաթերթ «Փրախտ» իր վերջին թիւին մէջ կը գրէ թէ Ղարարաղի Մարզին մէջ կացութիւնը անհակակշուելի դարձած է տեղւոյն հայ ժողովուրդին ցոյցերուն եւ գործադուլներուն պատճառով, որոնք տեղի կ'ունենան Մարզին Հայաստանին կցումը պահանջելով:

Թերթը կը յայտնէ թէ Մարզին սննդեղէնի պարենաւորումը դժուարացած է գործադուլի պատճառով:

Համաձայն «Ռէօյթըր» լրատու գործակալութեան, Չորեքշաբթի գիշեր հազարաւոր ցուցարարներ խմբուած են թաւրոնի հրապարակը, վերահաստատելու համար խորհրդարանի նախագահութեան ուղղած իրենց պահանջը թէ Հայաստանի Գերագոյն Սովետի 15 Յունիսի նիստին արձանագրուի Ղարարաղի հարցը: